Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 83-150(1)

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 08 ապրիլի 2009 թվականի

Նախագահում էր՝

Տ. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության վարչապետ, գործարարության աջակցման խորհրդի նախագահ

Մասնակցում էին՝

Վ. Ներսիսյանց - ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, գործարարության աջակցման խորհրդի փոխնախագահ

Տ. Դավթյան - ՀՀ ֆինանսների նախարար

Ն. Երիցյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար

Ռ. Հարությունյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն, գործարարության աջակցման խորհրդի քարտուղար

Գ. Արզումանյան - «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն

Ա. Մկրտչյան - «Ամերիա» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն

Է. Գրիգորյան - «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ

Զ. Հարությունյան - «Էլեկտրասարք» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն

Ս. Մաթևոսյան - «Լիկվոր» դեղագործական ընկերություն» ՍՊԸ-ի տնօրեն

Է. Սողոմոնյան - «Հայաստանի Բանկերի Միություն» իրավաբանական անձանց միության նախագահ

Ս. Բեկիրսկի - «Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն

Հրավիրվածներ՝

Ա. Համբարձումյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

Գ. Խաչատրյան - ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ

Ա. Շահնազարյան - ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ

Դ. Սարգսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

Ա. Ղարիբյան - ՀՀ վարչապետի խորհրդական

Դ. Հարությունյան - ՀՀ վարչապետի օգնական

Խ. Ավալյան - ՀՀ վարչապետի օգնական

Ա. Ալավերդյան - ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

Ս. Կարայան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Վ. Դանիելյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ա. Ղազարյան - «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» հասարակական կազմակերպության նախագահ

Ա. Վարդանյան - ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն

Վ. Աֆյան - «Սոլարէն» ՍՊԸ-ի տնօրեն

Ն. Նահապետյան - «Ակադեմիկոս Ա.Լ.Մնջոյանի անվ. Գյումրիի հիդրոէլեկտրակայան» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն

Ա. Ավետիսյան - «Բիո-քիմ» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն

Հ. Հակոբյան - «Էկոպեռլիտ» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն

Ն. Մամիկոնյան - «Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն

Դ. Աթանեսյան - «Ամերիկյան առևտրի պալատը Հայաստանում» իրավաբանական անձանց միության նախագահ

Ս. Սարգսյան - «Հայաստանի Բանկերի Միություն» իրավաբանական անձանց միության տնօրեն

Գ. Ավետիքյան - «Ռուսալ Արմենիա» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ

Ս. Մարտիրոսյան - «Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՓԲԸ-ի կադրերի բաժնի ղեկավար

Վ. Լազարյան - «Քրաուն Քեմիքալ» ՍՊԸ-ի տնօրեն

Կ. Գրիգորյան - Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի տնտեսագետ

Լ. Հարությունյան - Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) գործարարության աջակցության գրասենյակի ղեկավար, ՎԶԵԲ ավագ խորհրդատու

Պ. Դեմիրճյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի գլխավոր մասնագետ

Հ. Բալայան - ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական

վարչության գլխավոր մասնագետ

Ժ. Արամյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության պետ

Հ. Ասլանյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր իրավաբան

Մ. Մելիքյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի հասարակայնության հետ կապերի մասնագետ

Հ. Տորտիկյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ

Օ. Հայրապետյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Գործարարության աջակցման խորհրդի 2008թ. նոյեմբերի 19-ի նիստի N 124-272(2) արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին։

(Ռ. Հարությունյան)

2. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի 2008թ. դեկտեմբերի 13-ի նիստի N 28(3) արձանագրության 11-րդ կետի համաձայն «Բարեգործության մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու առաջարկությունների քննարկման մասին։

(Վ. Դանիելյան)

3. Գործարարության աջակցման խորհրդի գործարար համայնքի ներկայացուցիչների կողմից բարձրացված մի շարք առաջարկությունների քննարկման մասին։

(Ռ. Հարությունյան)

4. Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության կողմից աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման ոլորտում (ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը, «Սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքը և դրանցից բխող այլ

իրավական ակտերի կիրառում) իրականացված ուսումնասիրությունների և քննարկումների արդյունքում վեր հանված գործարարության զարգացման վրա ազդող մի շարք խնդիրների և դրանց լուծման առաջարկությունների քննարկման մասին։

(Ռ. Հարությունյան)

5. Հայաստանի բանկերի միության կողմից մի շարք օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու առաջարկությունների քննարկման մասին։

(Է. Սողոմոնյան)

1. Գործարարության աջակցման խորհրդի 2008թ. նոյեմբերի 19-ի նիստի N 124-272(2) արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին

(Ռ. Հարությունյան, Վ. Ներսիսյանց, Տ. Դավթյան, Ն. Երիցյան, Գ. Խաչատրյան,Ա. Ալավերդյան, Ս. Կարայան, Գ. Արզումանյան, Ա.Ղազարյան, Զ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

1. Ընդունել ի գիտություն «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն, գործարարության աջակցման խորհրդի քարտուղար Ռ. Հարությունյանի հաղորդումն այն մասին, որ գործարարության աջակցման խորհրդի 2008թ.-ի նոյեմբերի 19-ի նիստի N 124-272(2) արձանագրությամբ տրված բոլոր հանձնարարականները կատարվել են ժամանակին։

2. Ընդունել ի գիտություն ՀՀ վարչապետ, գործարարության աջակցման խորհրդի նախագահ Տ. Սարգսյանի հաղորդումն այն մասին, որ մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվող կարգի նախագիծ, որով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նոր նախագծով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածում համապատասխան լրացում և փոփոխություն կատարելուց հետո կկարգավորվեն մաքսային մարմինների հաշվարկած ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգման հնարավորությունից օգտվող ընկերությունների ընտրության, նրանց կողմից դիմումների ներկայացման, ներդրումային փաթեթի ընդունման և մի շարք այլ հարցերի ընթացակարգերը։

3. ՀՀ էկոնոմիկայի նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Ն. Երիցյանին՝ մինչև ՀՀ Ազգային Ժողովում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նոր նախագծի հաջորդ

ընթերցումը՝ խմբագրել և օրենքի նախագծում ներառել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ գործող օրենքի 6.1 հոդվածի 1-ին կետով սահմանված ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող բոլոր ապրանքների ծածկագրերը։

4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝ ՀՀ ֆինանսների նախարարության հետ միասին, ընդունելով ի գիտություն, որ ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորության ծագման պահի և ավելացված արժեքի հարկի գծով հաշվանցումներ կատարելու իրավունքի ստացման պահի որոշման սկզբունքները համապատասխանեցնելու հարցերը (երկու դեպքում էլ կիրառվելու է հաշվառման հաշվեգրման մեթոդը) լուծվում են ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագծի շրջանակներում, քննարկել, մինչև ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասի ուժի մեջ մտնելը, խնդրին լուծում տալու հնարավորության հարցը՝ գնահատելով ՀՀ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա նրա ազդեցության չափերը և առաջարկություն ներկայացնել գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստին։

5. Ընդունել ի գիտություն ՀՀ ֆինանսների նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Տ. Դավթյանի հաղորդումն այն մասին, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով սկզբունքորեն իր լուծումն է ստանալու հարկ վճարողին ավելացված արժեքի հարկի գերավճարների հետ վերադարձն օրենքով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում պետության կողմից համապատասխան տույժեր վճարելու խնդիրը և 2010թ.-ից սկսած ներդրվելու է համապատասխան ընթացակարգ։

6. ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանին՝ «Էլեկտրասարք» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Զ. Հարությունյանի և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ ընդունելով հարկային մարմնի կողմից հաշվառվող բոլոր հարկային պարտավորությունների մարման արդյունքում առաջացած հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարի մնացորդը հարկ վճարողի ցանկությամբ ներմուծված ապրանքների մասով մաքսային մարմիններին վճարման ենթակա հարկերի գծով պարտավորությունների մարմանն ուղղելու ընթացակարգերի հստակեցման և կատարելագործման հրատապությունը, քննարկել, մինչև ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասով խնդրի կարգավորումը, ՀՀ կառավարության որոշմամբ հարցին լուծում տալու հնարավորության հարցը և լուծման մեխանիզմների մասին առաջարկություն ներկայացնել գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստին։

7. ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Ալավերդյանին՝ ընդունելով ի գիտություն հարկ վճարողի մոտ այլ հարկատեսակների հաշվին գերավճարի գումարը հաշվանցելու դիմումի առկայության պայմաններում, նախքան օրենքով սահմանված կարգով այդ դիմումի հիման վրա ուսումնասիրության անցկացումը, դիմումում նշված՝ հաշվանցման ենթակա գումարի մասով հարկային պարտավորությունների գանձումից (այդ թվում նաև՝ հարկ վճարողի բանկային հաշիվների արգելանք դնելու միջոցով) ձեռնպահ մնալու ընթացակարգ ներդնելու նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կարծիքը, գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը ներկայացնել տվյալ խնդրին իրավական լուծում տալու վերաբերյալ կոնկրետ առաջարկություններ։

8. Ընդունել ի գիտություն ՀՀ ֆինանսների նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Տ. Դավթյանի հաղորդումն այն մասին, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագիծը, որով շահութահարկի նվազագույն գումարի կիրառություն այլևս նախատեսված չէ և, որ շահութահարկի նվազագույն գումարը կիրառությունից կհանվի ՀՀ հարկային օրենսգրքի ընդունմամբ։

9. ՀՀ ֆինանսների նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Տ. Դավթյանին՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված եւ շրջանառության մեջ դրված ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագիծը երկօրյա ժամկետում, (ՀՀ հարկային օրենսգիրքը՝ մշակումն ավարտելուց հետո) տրամադրել գործարարության աջակցման խորհրդի քարտուղարությանը և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միությանը՝ գործարար շրջանակներում շահագրգիռ քննարկումներ կազմակերպելու և արդյունքները ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրելու նպատակով։

2. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի 2008թ. դեկտեմբերի 13-ի նիստի N 28(3) արձանագրության 11-րդ կետի համաձայն «Բարեգործության մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու առաջարկությունների քննարկման մասին

(Վ. Դանիելյան, Ն. Երիցյան, Ա. Ալավերդյան, Ս. Կարայան, Գ. Արզումանյան, Դ. Սարգսյան, Տ. Սարգսյան)

10. ՀՀ էկոնոմիկայի նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Ն. Երիցյանին՝ հաշվի առնելով, որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի 2008թ. դեկտեմբերի 13-ի նիստում առևտրային իրավաբանական անձի կողմից ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց ապրանքներ տրամադրելու գործարքը ավելացված արժեքի հարկով չհարկելու վերաբերյալ բարձրացված առաջարկությանը իրավական լուծում տալու վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված տարբերակների նկատմամբ առկա են տարաձայնություններ՝ ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ մեկ անգամ ևս քննարկել և ձևավորել հարցի լուծման միասնական մոտեցում ու առաջարկություն ներկայացնել Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդին:

3. Հայաստանի բանկերի միության կողմից մի շարք օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու առաջարկությունների քննարկման մասին

(Է. Սողոմոնյան, Ա. Ալավերդյան, Ս. Կարայան, Դ. Սարգսյան, Ա. Շահնազարյան, Գ. Խաչատրայն, Ա. Մկրտչյան, Գ. Արզումանյան, Տ. Սարգսյան)

11. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Ալավերդյանին՝ հիմք ընդունելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի գործողությունից ծագող խնդիրների լուծման վերաբերյալ Հայաստանի բանկերի միության կողմից ներկայացված առաջարկությունները, գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել բարձրացված խնդիրներին իրավական լուծումներ տալու ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքները:

12. ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանին, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետ Ա. Սարգսյանին և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Ե. Զախարյանին՝ Հայաստանի բանկերի միության հետ համատեղ քննարկել շարժական գույքի սեփականության պետական գրանցման և գրավի առարկաների իրացման ընթացակարգերում ծագած խնդիրների լուծման վերաբերյալ Հայաստանի բանկերի միության առաջարկությունները, վեր հանելով նաև ՀՀ Նախագահի կարգադրությամբ նախկինում այդ ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքները, և գործարարության աջակցման խորհրդի քարտուղարությանը ներկայացնել

հարցերի կարգավորման վերաբերյալ առաջարկություններ՝ գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստում դրանց քննարկումները կազմակերպելու նպատակով։

13. ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Ալավերդյանին՝ Հայաստանի բանկերի միության հետ համատեղ քննարկել բանկերի կողմից գրավի առարկայի իրացման դեպքում պարտապանի հարկային պարտավորությունների ծագման և բանկերի կողմից, որպես ֆինանսական գործակալ, պարտապանի հարկային պարտավորությունների վճարման մեխանիզմների գործընթացում Հայաստանի բանկերի միության կողմից բարձրացված խնդիրները և գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը ներկայացնել հարցերի կարգավորման վերաբերյալ առաջարկություններ։

14. Գործարարության աջակցման խորհրդի սույն նիստի օրակարգի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հարցերի քննարկումները հետաձգել և ներառել գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստի օրակարգում։

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ